№ 174 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16 1900 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16 № 174

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուլտուրական պահանջների զարգացումը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործեր. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն,

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

—

Շատ բան, որ առաջ կեանքի մէջ պատուաստվում և պահպանվում էր բարեգործութեան և մեկենասութեան միջոցով, այժմ դարձել է իրական պահանջ և կենսական անհրաժեշտութիւն: Մի ժամանակ մեր քաղաքների դպրոցները ամէն դիւրութիւններ էին տալիս աշակերտներին ուսանելու համար, օրինակ ազատում էին նրանց ուսման վճարից, կամ վերցնում էին շատ քիչ վճար և դարձեալ աշակերտների թիւը լինում էր շատ սահմանափակ: Իսկ այժմ ուսումը դարձել է անհրաժեշտութիւն և դպրոցները այլ ևս չեն կարողանում տեղաւորել բոլոր ցանկացողներին, չը նայելով այն հանգամանքին, որ ընդունելութիւնը դժուարացրած է և ուսման վարձը չափազանց բարձրացրած: Մի ժամանակ առանց օժանդակութեան անկարող էին նոյն իսկ առաջադէմ երկիրներում գոյութիւն ունենալ թատրոն, մանագիտական դասընթացքներ, լրագիրներ, գիտական ընկերութիւններ և նոյն իսկ կլուբներ, իսկ այժմ դրանցից շատերը արդէն իրանք իրանց ապահովում են և դեռ մեծ եկամուտների աղբիւրներ էլ են դառնում: Մեր մէջ, դժբաղդաբար, դեռ շատ կուլտուրական պահանջներ շարունակում են մնալ այն վիճակում, որ կարօտ են կողմնակի խրախոյսի և աջակցութեան:

Կուլտուրական շատ պահանջներ մեր մէջ դեռ համարվում են շռայլութիւն և աւելորդ մի ծախք: Արդեօ՞ք շատ տների մէջ դուք կը գտնէք գիրք, լրագիր, քարտէզ, նոյն իսկ ժամացոյց, ջերմաչափ և ուրիշ առարկաներ, առանց որոնց անկարող է կուլտուրական մարդը ապրել: Մեր գիւղական շրջանում նոյն իսկ բամբասանքի են ենթարկվում մարդիկ, որոնք փող են ծախսում այդպիսի առարկաների վրա և նրանք անկարող են յոյս դնել համայնքի զիջողութեան վրա իրանց տուրքերի վերաբերութեամբ, որովհետև շռայլութեան իրերի գոյութիւնը համայնքի համար ապացոյց է, որ նրանց տէրը այլ ևս ազատ է անհրաժեշտ կարիքներից:

Մտաւոր կեանքի պահանջները մանաւանդ շատ դանդաղ են զարգանում մեր մէջ: Այն մարդը, որ նուիրել է իրան մտաւոր գործունէութեան, պէտք է պատրաստ լինի զոհեր տանելու: Յօդուածագիրը, վիպասանը, գիրք թարգմանողը անկարող են ազատ նուիրվել իրանց ընտրած գործին, որովհետև նրանց արդիւնաբերութիւնը դեռ բաւականաչափ լաւ չէ վարձատրվում: Նպաստեցէ՛ք, որ կուլտուրական պահանջները հաստատ արմատ գցեն ազգաբնակութեան ընդարձակ խաւերի մէջ, այն ժամանակ շատ բան, որ այժմ առանց կողմնակի խրախոյսների և օգնութեան առաջ չէ գնում, կը ստանայ բնական երևոյթի և կեանքի արտայայտութեան կերպարանք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Լրագիրներից եւ շաբաթաթերթերից յետոյ ռուսաց լուրջ, համակրելի ուղղութեան հետեւող ամսագիրներն էլ վերին աստիճանի ջերմ համակրական տողեր են նուիրում հանգուցեալ Գրիգոր Զանչեանի յիշատակին: «Жизнь» ամսագիրը գրում է.

Զափազանց համեստ լինելով իր գործերի գնահատութեան մէջ, Գրիգոր Զանչեան միշտ ասում էր. «Ես արխիվային մուկ եմ միայն, իմ նիւթերը ամբողջովին անցեալում են գտնվում, կարող եմ միայն պատմական տեղեկութիւններ տալ»: Լինելով ծագմամբ հայ, Զանչեան միշտ ջերմապէս սիրում էր իր ցեղակիցներին եւ ջերմապէս վշտանում էր թիւրքական կոտորածների՝ հայերի համար ծանր օրերում: Հայ որբերին, կոտորվածների որդիներին օգնելու համար նա հրատարակեց մի ժողովածու, որ երկու անգամ տպագրվեց: Նոյն հայ որբերի օգնութեան ֆօնդին Զանչեան սովորաբար տալիս էր իր ամբողջ հօնորարը վերջին ժամանակներում: Հրաժեշտ տալով այժմ Զանչեանին, մենք բարոյական բաւարարութեան զգացմունքով կարող ենք ասել, որ մեծ եւ կարող է տպագրական խօսքի ոյժը, երբ այդ խօսքը բղխում է ճշմարտութեան, ազնւութեան մարդուց, այն մարդուց, որ անձնազոհութեամբ նուիրված է ազատութեան եւ իր հայրենիքի, ինչպէս նաեւ ամբողջ մարդկութեան զարգացման գաղափարին: այդ խօսքը խրախուսում է մեզ, ներշնչելով համոզմունք, որ երբէք ոչ մի մեծ բան չի կորցնի իր նշանակութիւնը:

«Міръ Божій» ամսագրի մէջ Ա. Զիվելեգով, համեմատելով Զանչեանի «Эпоха великихъ реформъ» գլխաւոր աշխատութիւնը Միշլէի «Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան» հետ, ասում է թէ այդ երկու գրքերը համարեա միանման կրթական նշանակութիւն ունեցան հասարակութեան համար, մէկը Ֆրանսիայում, միւսը՝ Ռուսաստանում: Ի վերջոյ յօդուածագիրը աւելացնում է.

Զանչեանի մի ուրիշ յատկութիւնն էլ նրա հարատեւողական աղգակիցներն էին Թիւրքիայում: Սասունի կոտորածը եւ նրան հետեւած աւերումները, հալածանքները քրիստոնեաների դէմ XX դարի չէմքում, հարիւր հազարաւոր զոհեր, որոնք սոսկալի տանջանքների մէջ ոչնչացան քրդերի եւ թիւրք զինուորների ձեռքից, հազարաւոր որբեր, որոնք մնացին ճակատագրի կամքին մատնված, մի ամբողջ ժողովուրդ, որ առանց Եւրոպայի օգնութեան սովի զոհ կը դառնար, օպերետային բէֆօրմները, որոնք հայ ազգաբնակութեան անէծքը դարձան, արեւելքի որդիների զրգռված կրքերը, որոնք ամէն օր, ամէն ժամ սպառնում էին նոր պայթումներ առաջացնել—ահա այն փաստերը, որոնք հարկադրեցին խորապէս չանթահարված Զանչեանին ձեռք զարկել վնասված թիւրքահայերին օգնելու գործի կազմակերպութեան: Նախ «Положеніе армянъ въ Турціи», ապա «Братская Помощь»-ի երկու հրատարակութիւնները, որոնք սարսափելի աշխատանք էին պատճառում նրան, խլում էին նրանից՝ վերջին ոյժերը, առողջութեան վերջին պաշարները, կարողութիւն տուին նրան ուղարկել Թիւրքիա մօտ 60,000 ռուբլի եւ բաց անել իր կենդանութեան ժամանակ 12 որբանոցներ: Եւ այս բոլորը 3—4 տարվայ միջոցում գլուխ բերվեց...

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XII

Իմ անցեալ յօդուածում, խօսելով Ներսիսեան դպրոցի մասին, ես այն կարծիքը յայտնեցի, թէ նա գտնվում է ողորմելի դրութեան մէջ: Այդ վերաբերում էր գլխաւորապէս դպրոցի արտաքինին: Ինչ վերաբերում է ներքինին, ես խոստացայ ապացուցանել, որ նա չէ համապատասխանել է եւ չէ համապատասխանում ժանկավարժական սկզբունքներին:

Սակայն, նախ քան ներքինին անցնելը, դարձեալ մի քանի խօսք արտաքինի մասին:

Շէնքի վերաբերմամբ ես նախատեսել էի առարկութիւններ: Լսեցի այդ առարկութիւնները, որոնք ցոյց են տալիս, որ ներկայ հոգաբարձութիւնը աւելի ջանք է գործ դրել Ներսիսեան դպրոցի համար նոր, մարդավայել շէնք չինելու նպատակով, քան նախկինները, բայց որոնք անկարող են համոզել, թէ ներկայ հոգաբարձութիւնը արել է այդ նպատակով այն բոլորը, ինչ որ պարտական էր անել: Իսկ հարցը ես այդպէս էի դրել:

Շէնքից յետոյ, առաջինը, որ աչքի է ընկնում, երբ մարդ մտնում է Ներսիսեան դպրոց, այդ այն է, որ կան աշակերտներ, որոնք հագնված են փողոցային երեխաների նման, եւ

կազմակերպութիւն. նա ունէր ահագին կալուածքներ, մեծ դրամագլուխներ, որոնց բազմապատկելու համար Յիսուսի անունը կրող հայերը չէին քաշվում նոյն իսկ առեւտրական եւ բանկային ձեռնարկութիւններից: Ֆրանսիական հոգեւորականութիւնը, ինչպէս ասացինք, այդ ժամանակ գալլիկան եկեղեցու ազատութիւններն էր պաշտպանում Լուդովիկոս XIV-ի հետ: Եզուիտները այդ ազատութիւնների ջերմ պաշտպաններ հանդիսացան եւ թագաւորին դուր գալու համար նոյն իսկ այն աստիճանին հասան, որ իրանց համար էլ կատարեալ անկախութիւն էին պահանջում. մի եւ նոյն ժամանակ, իրանց վտանգաւոր թշնամի յանսենականների մասին չչնջում էին թագաւորի ականջին թէ նրանք հանրապետականներ են, ուզում են տապալել միապետութիւնը: Բարեպաշտ մատնութիւնը, ի հարկէ, իր հետեւանքներն ունեցաւ. Լուդովիկոս հալածում էր յանսենականներին: Ինոսկենտիոս XI պապը դիմադրում էր գալլիկանութեան ձգտումներին եւ իբրեւ եզուիտական ցանցերի մէջ փաթաթված կառավարութեան դէմ մարտնչող՝ նա վայելում էր եզուիտների թշնամի յանսենականների համակրութիւնը: Մարսէլի տեղապահը, իր հովանաւորութեան տակ առնելով Հայրապետեանին, դրանով պատում էր Հռոմի գահը: Նա մինչեւ անգամ հիմնեց Մարսէլում մի կրօնական ընկերակցութիւն, որ Հռոմի Պրոպագանդայի պատճէնը պիտի լինէր եւ նրա պէս պիտի աշխատէր բոլոր հերետիկոսութիւնները վերացնելու համար:

Եւ այսպէս, հայոց դժբախտ ժամագիրքը կռիւների առարկայ էր եւ այն պատճառով, որ կար յանսենականութիւն, կար մրցում Հռոմի եւ Պարիզի մէջ: Այսպիսի հանգամանքներում միամտութիւն կը լինէր յուսալ թէ կարելի է Հայրապետեանի պէս ֆանատիկոսներին յաղթել: Սողոմոն Լեւոնեանը Նասիբի եւ գրաչար Մատթէոս Յովհաննիսեան Վանանդեցու եռանդուն աշխատութեամբ 1679-ին վերջացրեց Ժամագրքի տպագրութիւնը եւ դատաստանական վճռի համաձայն դրեց նրա վրա թէ Ոսկանի եւ թէ Համազասպեանի անունը, ապա պահանջեց, որ վերջացնեն հաշիւները: Սակայն գրաքննիչ Հայրապետեան ոչինչ զիջողութիւն չէր ուզում անել. բանը այն տեղին հասաւ, որ այդ մարդը սկսեց պահանջել, որ Գրիգորեան տօմարը մտցնվի Ժամագրքի մէջ, մի բան, որ չէին ընդունել Արեւելքի կաթոլիկներն անգամ: Հռոմը ոչ միայն հարկաւոր չը համարեց չափաւորել իր մոլեռանդ ծառայի բռնաւորական եռանդը, այլ եւ վարձատրեց նրան, նշանակելով առաքելական քարոզիչ Մարսէլում եւ հայերէն գրքերի քննիչ երեք տարի ժամանակով:

Լեւոնեանին մնում էր արդարութիւն որոնել Պարիզում: Նրա բողոքների վրա ուշադրութիւն դարձրին նոյն իսկ մի քանի ֆրանսիայի հոգեւորականներ, որոնք անիրաւութիւն էին համարում այդ արգելքները: Սակայն հայ տպագրիչները շատ քիչ օգուտ կարող էին քաղել այդ պաշտպանութիւնից: Հարցը ընդունեց կրօնական բանակուի ձեւ, նա դարձաւ պարիզցի եւ մարսէլցի աստուածաբանների անձնական պատուի հարց: Իսկ ֆրանսիական կառավարութեան համար աւելի նշանակութիւն ունէր այն, որ Հայրապետեանին այդպիսի լիազօրութիւններ տուող Հռոմը կամեցել է իր վարչական իրաւունքները հաստատել Մարսէլում, մի բան, որ գալլիկան ազատութիւնների հակառակ էր եւ չէր կարող կասկածներ չը յարուցանել: Ուստի 1683-ին Հայրապետեան հարց ու փորձի կանչվեց եւ կարողացաւ ջրել կառավարութեան կասկածները, ասելով թէ ինքը ինկվիզիտօրի պաշտօն չունի ֆրանսիական հողի վրա: Հարցաքննող դատաւորը, վերջապէս այն եզրակացութեան եկաւ, որ հայ քահանան կարող է մնալ Մարսէլում, միայն չը պիտի խառնվի հայ տպարանի գործերի մէջ, իսկ տպարանը պարտաւոր է ճշդութեամբ կատարել 1669-ի պայմանը, այն է՝ չը տպագրել կաթոլիկ եկեղեցուն հակառակ գրքեր:

Բայց Հայրապետեան դրանով էլ չը սանձահարվեց: Առաջնորդական տեղապահի աջակցութիւնը վայելելով, նա սկսեց ամբաստանութիւնների հեղեղ թափել հայ տպագրիչների վրա, մեղադրելով թէ նրանք հերետիկոսութիւններ են տպագրում. եւ այդպիսի բաներ նա գտնում էր ոչ միայն Ոսկանի սկսած Ժամագրքի մէջ, այլ եւ այն գրքերի մէջ, որոնք տպագրվել էին նրա մահից յետոյ: Լեւոնեան միտք ունէր նորից տպագրել Աստուածաշունչը, բայց Հայրապետեան պահանջեց, որ հայերէն Աստուածաշունչը տպագրվի ճիշտ եւ ճիշտ լատիներէնի համաձայն: Ահա ինչ հրէշաւոր չափերի էր կարողանում հասնել կրօնական ֆանատիկոսութիւնից բղխած թշնամութիւնը հակառակորդ ազգակիցների մէջ. ահա ինչեր կարող էր անել մի հայ միւս հայի դէմ:

Եւ այս հանգամանքների մէջ ինչ կարող էին անել Մարսէլի տպարանին ծառայող մի բուռն հայերը: Որքան էլ արդար լինէր նրանց դատը, որքան էլ Պարիզի հոգեւորականներից Ռիշար Սիմոն ազդու կերպով հերքէր Հայրապետեանի ամբաստանութիւնները եւ նկարագրէր հայերի կրած տանջանքները, բայց վերջ ի վերջոյ մնում էր այն փաստը, որ հայ տպագրիչները մի հերձուածող եկեղեցու են պատկանում: Իսկ այդպիսիների համար շատ էլ անվտանգ բան չէր շարունակ ծեծել ֆրանսիական իշխանաւորների դռները եւ արդարութիւն խնդրել: Լուդովիկոս XIV-ի վարչական սիստեմն էր՝ հոգեւորականութիւնը հեռու պահել իր անսահման միապետութեան դէմ որ եւ է ազդեցութիւն գործելու դիրքից. բայց դա չէր նշանակում թէ ժողովուրդն էլ պիտի ազատ լինի հոգեւորականների խնամակալութիւնից. ընդհակառակն, միապետութեան շահերը պահանջում էին, որ ժողովուրդը եկեղեցու հլու

որ աշակերտների մեծամասնութեան վրա չէ երեւում դպրոցի բարեկրթող, կուլտուրականացնող, մաքրասէր դարձնող ազդեցութիւնը։ Իմ անձնական տպաւորութիւնը գոնէ այնպէս է եղել, որ բարեկրթութեան եւ մարդավարութեան տեսակէտից դպրոցը գրեթէ ոչինչ չէ տալիս աշակերտներին,—ինչպէս եղել են եւ կան իրանց ընտանիքներում, լաւ կամ վատ, այնպէս էլ մնում են։ Մինչդեռ դպրոցը, մանաւանդ մեզանում, մեծ քաղաքակրթիչ դեր ունի կատարելու այդ տեսակէտից։

Այդ կողմից՝ շատ հետաքրքիր է ռուսաց ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նոր կարգադրութիւնը, որով մրցանակներ են նշանակվում գիմնազիայի՝ մաքրասիրութեամբ աչքի ընկրող աշակերտների համար։ Ճիշդ է, մեր դպրոցներում սովորողների ծնողները աւելի աղքատ են քան գիմնազիստներինը, եւ այդ դժուարացնում է մեր դպրոցական վարչութիւնների գործը, բայց երբ պահանջներ են դրվում որ եւ է վարչութեան, նրանք պէտք է համապատասխանեն հէնց կարիքի չափին, առանց, ի հարկէ, դուրս գալու հնարաւորութեան սահմանից։ Իսկ ոչ ոք չէ կարող ապացուցանել, թէ, մի կողմից, անհնար է պահանջել, որ վայելուչ հագնվեն եւ իրանց տ ու գլուխը մաքուր պահեն Ներսիսեան դպրոցի ոչ չքաւոր աշակերտները, եւ թէ, միւս կողմից, անկարելի է հնարաւորութիւն տալ բոլոր չքաւորներին մաքուր հագնվելու եւ իրանց մաքուր պահելու։ Վերջինը անկարելի չէ, եթէ, ի հարկէ, դպրոցի վարչութիւնը համոզված լինի, որ հոգաբարձուները պարտական են, ուրիշ միջոցներ չը գտնելու դէպքում, իրանց անձնական միջոցներով օգնել չքաւոր աշակերտներին, իսկ ուսուցիչները, ծայրայեղ դէպքում, պարտական են նոյն իսկ զրկվել իրանց ռոճիկի որոշ տոկոսից։ Եւ ուսուցիչների ռոճիկի աւելացնելու կուսակից եմ, բայց երբ ուսուցիչները ստանում են դպրոցի ամբողջ եկամուտի կէսը, իսկ աշակերտներից շատերը մնում են զուրկ անհրաժեշտ օգնութիւնից, հաւատացէք, մեզք չի լինի մի 5% զեղջել այդ ռոճիկներից եւ յատկացնել չքաւոր աշակերտներին, թէեւ եթէ հոգաբարձուները եւ ուսուցիչները աշխատեն, միշտ կարող են ստանալ հարկաւոր միջոցները հասարակութիւնից։

Այսպիսով մենք աննկատելի կերպով արտաքինից անցանք ներքինին, որ, կրկնում եմ, երբէք չէ համապատասխանել Ներսիսեան դպրոցում մանկավարժական սկզբունքներին։

Մի կողմ թողնելով անցեալներում տիրող կղերական րէժիմը, որ վերացրին վերջին վարչութիւնները,—մի բան, որ պատիւ է բերում նրանց,—մենք կը խօսենք միայն վերջին տարիների մասին, որովհետեւ հին րէժիմի անհամապատասխան լինելը մանկավարժութեան պահանջներին ինքն ըստ ինքեան հասկանալի է, եւ, բացի դրանից, այդ հարցը աւելի քիչ գործնական նշանակութիւն ունի։

Վերջին տարիներս, իմ կարծիքով, դասաւորութիւնը Ներսիսեան դպրոցում կատարվում է նոյն բուտինայի համաձայն, որ սկզբից տիրում է այնտեղ։ Կենդանի հետաքրքրութիւն իրանց աւանդած առարկաներով ուսուցիչները չեն ներշնչում իրանց աշակերտներին։ Ընթերցասիրութիւն ոչ միայն չեն զարգացնում, այլ երբեմն նոյն իսկ խեղդում են։ Զեմ ուզում ասել, թէ չը կան բացառութիւններ։ Բայց փաստ է, որ Ներսիսեան դպրոցի այժմեան վարչութիւնը թոյլ չէ տուել մի ուսուցչի շաբաթը երկու կամ գոնէ մի անգամ ճաշից յետոյ կամ տօն օրերին պարապել ընթերցանութեամբ աշակերտների հետ, պատճառ բերելով, որ ուսուցիչները դէմ են այդպիսի բաների, որովհետեւ աշակերտները դրա շնորհիւ կը սկսեն վատ պատրաստել դասերը։ Փաստ է եւ այն, որ թեանչանների եւ քննութիւնների սիստեմը ամենահիմնական միջոցն է համարվում այժմ Ներսիսեան դպրոցի ուսուցիչների մեծամասնութեան կողմից՝ աշակերտներին բան սովորեցնելու համար։ Փաստ է վերջապէս, որ աշակերտները աւարտում են դպրոցը գիտութեան շատ աննշան պաշարով եւ խոշորացուցային չափով զարգացած հարցասիրութեամբ, ընթերցասիրութեամբ եւ ինքնուրոյն պարապելու ընդունակութեամբ։

Ցաճախել դպրոցը որոշ ժամերին, արտասանել ժամվայ ընթացքում որոշ քանակութեամբ բառեր, տալ որոշ թւով հարցեր ու ստանալ նրանց պատասխանները եւ դնել այդ պատասխանների համար որոշ թւով 2-ներ, 3-ներ եւ այլն եւ կարծել, թէ կատարված է պարտականութիւնը,—ահա թէ ինչ ենք անուանում մենք բուտինա դասաւորութեան մէջ, բուտինա, որ, մեր համոզմունքով, տիրում է դեռ Ներսիսեան դպրոցի ուսուցիչների մեծ մասի դասաւորութեան մէջ։

Աւելորդ է ասել, որ այդ չէ համապատասխանում մանկավարժութեան ամենատարրական պահանջներին, ինչպէս չէ համապատասխանում այդ պահանջներին եւ այդ դպրոցում ընդունված պատիժների սիստեմը եւ առհասարակ վերաբերմունքը դէպի աշակերտները։

Մենք կարծում ենք, որ առաջադիմական հոգաբարձութիւնից եւ այդ հոգաբարձութեան հաստատած ուսուցչական խմբից կարելի էր սպասել, որ նրանք կը վերացնեն դպրոցից այնպիսի պատիժներ, ինչպէս առանց ճաշի թողնելը եւ աշակերտներին դասի ժամանակ դասարանում կանգնեցնելը։ Բայց նրանք ոչ միայն չեն վերացրել այդ հակամանկավարժական պատիժները, այլ եւ անհնար չեն դարձրել այնպիսի դէպքեր, ինչպէս՝ էժանագին ճաշարանում ճաշող աղքատ աշակերտին առանց ճաշի թողնելը, որ կը նշանակէ ամբողջ օր քաղցած պահել աշակերտին (որովհետեւ նա կարող է ճաշել միայն որոշ ժամերին), եւ հինգերորդ դասարանի աշակերտներին դասարանում կանգնեցնելը, այսինքն ստորացուցիչ պատժի ենթարկելը այնպիսի մի պատանու, որ մէկ-երկու տարուց յետոյ պէտք է ուսուցիչ լինի։ Էլ չենք խօսում այն բանի մասին, որ երբ աշակերտը դասի ժամանակ կանգնում է դասարանում, ոչ միայն ինքը չէ կարող ոչինչ հասկանալ այն բանից, ինչ որ ասում է ուսուցիչը, այլ եւ խանգարում է բոլոր աշակերտներին, եթէ, ի հարկէ, աշակերտներն էլ չեն սովորել այնպէս անտարբերութեամբ դիտել ուրիշի տանջանքը եւ ստորացումը, ինչպէս ուսուցիչները։

Մենք հաստատ գիտենք, որ ուսուցչական ժողովում ձայներ են բարձրացել այդ պատիժների դէմ, բայց ժողովի նախագահը միշտ աւելորդ է համարել քննութեան ենթարկել այդ «ընդհանուր», «սկզբունքի» հարցերը, իսկ ժողովականների մեծամասնութիւնը ցոյց է տուել այդ դէպքում զարմանալի անտարբերութիւն։

Մենք գիտենք եւ այնպիսի դէպք, երբ ուսուցչական ժողովը սկսել է քուէարկել մի քանի ուսուցիչների առաջարկութիւնը հինգերորդ կամ վեցերորդ դասարանի աշակերտի արձակվելու մասին, առաջարկութիւն, որի հիմքն այն էր, որ աշակերտը յանդուգն խօսք էր ասել ուսուցիչներից մէկին եւ այն այնպիսի աշակերտ, որի վերաբերմամբ մի տարի առաջ վճիռ է կայացել դուրս անել, եթէ նորից նկատվի մի որ եւ է յանցանքի մէջ։ Քուէարկութեան կէսին նոր ուսուցիչներից մէկը խընդրում է ցոյց տալ անցեալ տարվայ արձանագրութիւնը եւ հարց է տալիս, թէ ինչ է ասում իրան արդարացնելու համար մեղադրվող աշակերտը։ Բանից դուրս է գալիս, 1) որ այդպիսի վճիռ չէ եղել (գոնէ արձանագրութեան մէջ չը կար), 2) որ աշակերտին չէ խօսեցրել ոչ դասատիարակը, ոչ տեսուչը, մի խօսքով ոչ ոք,—մինչդեռ մարդասպաններին էլ չեն պատժում առանց նրանց միջոց տալու իրանց արդարացնելու, եւ 3) առաջարկութեան գլխաւոր հեղինակը սխալվել է, չմոռնալ է այդ աշակերտի ազգանունը մի ուրիշ շատ վատ աշակերտի ազգանունի հետ։

Հետաքրքիր է եւ այն, որ, ինչպէս պարզվեց այդ ժողովում, յանդուգն աշակերտի դասընկերները նկատողութիւն էին ստացել այն բանի համար, որ երբ ուսուցիչը, նեղացած աշակերտի վարմունքից, դուրս էր գնացել, դասը կիսատ թողնելով, նրանք յանդիմանել էին իրանց յանդուգն ընկերոջը, ասելով, թէ նա այդպիսի վարմունքով անպատուութիւն է բերում իրանց դասարանին։

Ես աւելորդ եմ համարում ուրիշ փաստեր բերել ապացուցանելու համար իմ այն կարծիքը, թէ Ներսիսեան դպրոցում վերաբերմունքը դէպի աշակերտները հայրական չէ, այսինքն միակը, որ թոյլ է տալիս մանկավարժութիւնը,—այլ ձեւապաշտական, չինովնիկական եւ երբեմն նոյն իսկ ոստիկանական։ Տ. Ց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի, սեպտեմբերի 18-ին, նշանակված է Ախալքալաքի գաւառում երկրաշարժից վնասվածներին օգնող գլխաւոր յանձնաժողովի նիստը, որ կայանալու է երեկոյեան ժամի 8-ին, Թիֆլիսի նահանգապետի բնակարանում։

—

Մօտ օրերումս դուրս եկաւ մամուլի տակից կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի հաշիւը ուսումնարանների դրութեան մասին 1899 թւի ընթացքում։ Այդ հաշուի մէջ, ի միջի այլոց, գտնում ենք հետեւեալ տողերը՝ նուիրված հայոց թեմական դպրոցներին։ «Զորս դպրոցական հաստատութիւններ, որոնք գտնվում են էջմիածնի հայ լուսաւորչական սինոդի վարչութեան տակ, նշանաւոր են նրանով, որ նրանք, կարծեմ, միակն են ամբողջ Ռուսաստանում, որոնք գոյութիւն ունեն առանց կառավարութիւնից հաստատված կանոնադրութեան, չը նայելով որ ամենակրտսերը նրանցից հիմնված է 26 տարի առաջ, իսկ աւագագոյնը—Թիֆլիսի հոգեւոր դպրանոցը—բացված է 1821 թւին, այսինքն 79 տարի առաջ»։

—

Պետերբուրգի համալսարանի վարչութիւնը հարց է յարուցել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, թէ արեւելեան լեզուների բաժնի ուսանողները ունեն արդեօք իրաւունք լսելու նաեւ իրաւաբանական բաժնի դասախօսութիւնները եւ քննութիւն բռնելու իրաւաբանների հետ միասին։

—

Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, որ Երեւանի թեմական դպրոցի համար տեսուչ է հրաւիրված բժիշկ Տատեան, որն արդէն բանակցութիւններ է սկսել հոգաբարձութեան հետ։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը միջնորդութիւն է յարուցանում նահ-

---

հօտը լինի։ Կոիւ Հռոմի դէմ՝ ֆրանսիական եկեղեցուն վարչական անկախութիւն տալու համար, ֆրանսիական հոգեւորականութիւնը կատարելապէս հպատակված թագաւորական գահին, իսկ ժողովուրդը — հոգեւորականութեան,—այսպէս էր Լուդովիկոսի շրջանի օդին։ Թագաւորը կաթոլիկութեան հեղինակութիւնը մաղի չափ խախտելու միտքը չունէր։ Իբրեւ եկեղեցու աւագ զաւակ, մանաւանդ իբրեւ Աստուծու մինիստր այս աշխարհի վրա՝ նա վերացրեց նոյն իսկ այն ազատութիւնը, որ վայելում էին ֆրանսիացի բողոքականները (հուգենոտներ). քանդել նրանց եկեղեցիները, բռնութեամբ նրանց երեխաներին կաթոլիկ մկրտել, նրանց հոգեւորականներին անգութ հալածանքների ենթարկել—սրանք բարեպաշտական մեծագործութիւններ էին այդ թագաւորի համար, որ կրօնի մասին հասկացողութիւն էլ չունէր, ապրում էր սիրուհիներով շրջապատված, բայց կաթոլիկ կղերի կեղծաւոր հիացմունքի առարկայ էր եւ մեծ, ատուածային տիտղոսների ու փառաբանութիւնների էր արժանանում։

Լեւոնեանը եւ իր ընկերները յոգնել էին տասը տարվայ մաքառումներից։ Նրանք գործել էին եւ լաւ էին գործել, պաշտպանելով հայ տպարանի իրաւունքները։ Գեղեցիկ տպաւորութիւն է թողնում կաթոլիկ բռնակալութեան ենթարկված այդ մի բուռն գործաւորների տոկունութիւնը. նրանք տպագրութեան միջոցով հասարակութեան դատաստանին յանձնեցին Համազասպեանի սեւ գործերը, բայց գործնական կուի դաշտից էլ խոյս չը տուին։ Մի կողմից կուելով քահանայ Հայրապետեանի բարբարոսութիւնների դէմ, նրանք միւս կողմից շարունակում էին գրքերի հրատարակութիւնները Ոսկանի անունից։ 1675-ին Մարսէլի տպարանից լոյս տեսան ամբողջ հինգ գիրք, որոնց մէջ պատահում ենք այնպիսի նորութիւնների, ինչպէս են «Արհեստ համաբողութեան» (թարգմանած յատկապէս հայ վաճառականների համար), «Կանոնք զգուշութեամբ պահելոյ զանձն» (առողջապահական խրատներ)։ Հետեւեալ տարին հրատարակվում են երեք գիրք, իսկ 1677-ին մի գիրք։ Այնուհետեւ, մեր նկարագրած անցքերի պատճառով, Լեւոնեան հարկադրվում է անգործ մնալ մինչեւ 1683 թւականը, այսինքն մինչեւ այն ժամանակ, երբ արգելվեց Հայրապետեանին խառնվել նրա տպարանական գործերի մէջ. օգտվելով այդ ազատութիւնից, Լեւոնեան հրատարակեց «Ակն հոգեկան» կրօնական գիրքը եւ «Պարտէզ հոգեւոր» գրքի երկրորդ տպագրութիւնը։ Բայց շարունակել չը կարողացաւ. տեսնելով որ անհնարին է ամեն անգամ կուով մի տպագրութիւն խլել կաթոլիկ գրաքննութեան եւ մանաւանդ Հայրապետեանի ճանկերից, Լեւոնեանը փակեց տպարանը, բայց ոչ խղճաւ նրան լռեցնելու համար։ Գրաշար Մատթէոս Յովհաննիսեան Վանանդեցու հետ նա վերցրեց տպարանը եւ նորից գնաց Ամստերդամ։ Վաղուց պէտք էր բռնել վերադարձի այդ ճանապարհը։ Աղատ Հօլլանդիան, ուր չը կային ոչինչ արգելքներ ու հսկողութիւններ, նորից կենդանութիւն ու եռանդ պիտի ներշնչէր տանջված հայ տպագրիչներին, ինչպէս ներշնչում էր Լուդովիկոսի բռնութիւններից փախած հազարաւոր ֆրանսիացիներին։

Բայց Ամստերդամի տպագրական գործունէութեան այս երկրորդ շրջանի մասին մենք յետոյ կը խօսենք։ Այժմ, քանի չենք հեռացել կաթոլիկ երկիրներից, տեսնենք թէ ուրիշ ինչ գրքեր հրատարակվեցան այնտեղ։

Մեզ արդէն ծանօթ է Յովհաննէս Հոլովի կաթոլիկ քահանան, որ Մարսէլի տպարանի առաջին գրաքննիչն էր։ Հոլովը, որ կոչվում է եւ. կ. պօլսեցի, XVII դարի հայ կաթոլիկների մէջ ամենից շատ բեղմնաւոր գրական գործունէութիւն է ունեցել գլխաւորապէս իբրեւ թարգմանիչ։ «Պարտէզ հոգեւոր» աղօթագիրքը, որ տպագրվեց Ոսկանի տպարանում երկու անգամ, նրա թարգմանութիւնն էր։ 1674-ին լոյս տեսան Հոլովի երեք աշխատութիւնները—մէկը թարգմանական, երկուսը ինքնուրոյն։ Թարգմանականը, որ հրատարակվեց Պրօպագանդայի տպարանից, Թովմա Կեմպայցու հռչակաւոր միստիքական գրուածքն էր՝ «Համահեւեւումն Քրիստոսի»։ Այդ թարգմանութեամբ հայերն էլ միանում էին այն ազգերին, որոնք հիանում էին XV դարի նշանաւոր միստիկի այդ կրօնական հովուերգութեան վրա, որի մէջ յափշտակողը հաւատացեալի անկեղծ, մաքուր, մանկական սէրն է։ Կեմպայցին այդտեղ հերքում է գիտութիւնն ու քաղաքական ազատութիւնը, բայց դա արգելք չէր, որ գիրքը թարգմանվի բոլոր լեզուներով, տարածվի ամեն տեղ ահագին քանակութեամբ, մի խօսքով դառնայ մէկը այն գրական գործերից, որոնք մի որ եւ է ազգին չեն պատկանում, այլ ամբողջ աշխարհին։ Որքան էլ գիրքը իր բովանդակութեամբ կրօնական էր, իսկ թարգմանիչը լատինամոլ հայ գրող, բայց մենք չը պիտի մոռանանք, որ հայ տպարանը առաջին անգամն էր լոյս հանում եւրոպական մեծ հռչակ վայելող մի երկի թարգմանութիւնը։ Մեզանում էլ Կեմպայցին աջողութիւն գտաւ եւ հրատարակվեց մի քանի անգամ։

Հոլովի թարգմանութիւններին առանձին նշանակութիւն չէ կարելի տալ այն պատճառով, որ նա, իբրեւ կաթոլիկ հոգեւորական, նոյնպէս պարտաւորութիւն էր համարում լատինացնել հայոց լեզուն։ Այս ձգտումը նա ցոյց է տուել իր գրած քերականութեան մէջ, որ, ի լրումն ամենայնի, կրում է «Զտութիւն հայկաբանութեան» անունը։ Այդ երեւակայական զտութիւնը տպեց Պրօպագանդայի տպարանը, իսկ միւս ինքնուրոյն աշխատութիւնը—«Համառօտ ճարտասանութիւն» (առաջին տպագրվածը) հրատարակվեց Ոսկանի տպարանից։ Բայի այդ բոլորից, Ջանասէր քահանան թարգմանեց «Խոկումն քրիստոնէական». «Խոստովանարան կամ Ամբաստանարան ըստ կարգի պատուիրանաց տասանց պատգամայ եւ եօթանց մեղայ գլխաւորաց», «Նորագոյն ծաղիկ զօրութեանց», «Նուազարան երանութեան կուսին Մարիամու եւ սրբոյ հրեշտակին պահապանի», «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի»։ Վերնագիրներն էլ բաւական են ցոյց տալու համար, որ այդ գործերը ոչինչ նորութիւն չեն ներկայացնում գրականութեան համար եւ նրանց կարելի է յիշատակել միայն իբրեւ գրքեր, որոնք տպվեցան մասամբ Պրօպագանդայի, մասամբ Ոսկանի տպարաններում եւ Վենետիկում։

Բովիսի տպագրութիւններից յետոյ Վենետիկը հայերէն գիրք չը հրատարակեց մինչեւ 1678 թւականը։ Այդ տարվանից հայկական հրատարակութիւններին հետամուտ է լինում մի օտարազգի, Միքայէլ Բարբօնի անունով, որ իր այդ գործունէութիւնը շարունակում է բաւական երկար (մինչեւ 1690 թւականը), տպագրելով մեծ մասամբ եկեղեցու համար գործածական գրքեր—Աւետարան, Սաղմոս, Ժամագիրք, Խորհրդատետր, Տօնացոյց, զանազան աղօթագրքեր։ Ցիշենք եւ այն, որ այդ միջոցներում Պրօպագանդան հրատարակեց «Մանաւանդականք» անունով մի վիճաբանական գիրք, որ պիտի ցոյց տար մահմեդականներին, հրէաներին, ինչպէս նաեւ հերձուածող քրիստոնեաներին կաթոլիկ եկեղեցու ուղղափառութիւնը։

Հռոմի եւ Վենետիկի այս հրատարակութիւնները վկայում են, որ Ոսկանի մահից յետոյ հայ տպարանը դարձեալ ամփոփվում է միմիայն եկեղեցու շրջանակի մէջ։ Բայց կենդանի էին Ոսկանի աշակերտները, որոնք մի անգամ էլ պիտի հանդէս հանէին Ամստերդամում այդ վարդապետի համեմատաբար լայն հրատարակչական ծրագիրը։

(Պը շարունակվի)

ժանված կարգով, որ պետական գանձարանից, հինգ տարվայ ընթացքում, վեց հազար ռուբլի տրվի Մոսկվայի հնագիտական ընկերութեան՝ հրատարակելու համար նրա այն հետազօտութիւնները, որոնք վերաբերում են Կովկասին եւ արեւելեան նահանգներին։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի շուրջը գտնվող դաշտերում չատացել է մկների քանակութիւնը։ Նրանք, ի միջի այլոց, սկսել են մոտենալ քաղաքի բուսցրած մատաղ անտառին. բայց դեռ ոչ մի վնաս չեն հասցրել նրան, որովհետեւ դաշտերում ունեն բաւականաչափ կերակուր։ Երեք տարի առաջ, երբ մկները նոյնպէս բազմացել էին, նրանք սկսեցին իրանց վնասակար գործունէութիւնը ձիւնը գալուց յետոյ, երբ դաշտերի բուսականութիւնը ծածկվեց։ Այն ժամանակ անտառային հսկող յանձնաժողովը գործ դրեց մկների դէմ թունաւորած հացահատիկներ եւ թուլացրեց նրանց գործունէութիւնը։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ահա երկրորդ տարին է անցնում, որ մեր քաղաքային վարչութիւնը, ի յիշատակ Պուշկինի հարիւրամեայ յօբելեանի, պէտք է հիմնէր մի ժողովրդական տուն՝ էժանագին ներկայացումների եւ դասախօսութիւնների համար։ Թէ որքան կարեւոր է մի այդպիսի բարենպատակ հիմնարկութիւնը Բաթումում, այդ աւելորդ է ասել. Բաթումի մեծ մասամբ աղքատ, արհեստաւոր եւ բանւոր դասակարգը անկարող է այստեղ հազուադէպ եւ թանդ գներով ներկայացումներին յաճախել. ուստի, քաղաքային վարչութիւնը պէտք է հոգար չուտ գլուխ բերելու մեծ բանաստեղծի յիշատակին նուիրված օգտաւէտ հիմնարկութիւնը եւ այնպիսի պայմաններ ստեղծէր, որ Պուշկինի յիշատակը յարգող բոլոր ազգութիւններն էլ օգտվէին հաւասար կերպով։ Բայց, դժբաղդաբար, մեր քաղաքային վարչութիւնը ժամանակ չունի այդպիսի բաների մասին մտածելու»։

—

ՍԱՄԱՐԿԱՆԴԻՑ մեզ գրում են. «Մեր հայ կոլոնիայի աղօթատան գործերը սկսում են կանոնաւորվել, չնորհիւ Ռուբէն քահանայ Բէկ-Գիւլեանցի։ Զը նայելով, որ արդէն բոլորում է երկրորդ տարին, ինչ գոյութիւն ունի Սամարկանդի հայ կոլոնիայի ժամանակաւոր աղօթատունը, բայց ոչ ոք չէր մտածում մշտական տուն ունենալու մասին։ Աղօթատունը մինչեւ այսօր էլ մնում է վարձովի տան մէջ... Բէկ-Գիւլեանց քահանան դիմեց կոլոնիայի անդամներին, յորդորեց սեփական աղօթատան մասին հոգալու։ Այդ միտքը իրագործելու նպատակով ամսիս 3-ին, աղօթատան սենեակում, Բէկ-Գիւլեանց քահանայի հրաւէրով ու նախագահութեամբ, մեր կոլոնիայի անդամներից կայացաւ ընդհանուր ժողով, ուր դարձեալ Բէկ-Գիւլեանց չեչտեց, բացատրեց սեփական աղօթատան անհրաժեշտութիւնը։ Ցիշեալ ժողովում վճռվեց մի հոգաբարձական մարմին կազմել՝ սեփական աղօթատան միտքը իրագործելու համար։ Գաղտնի քուէարկութեամբ հոգաբարձուներ ընտրվեցին՝ պ.պ. Բաղդասար Ղազարեանց, Աւետիք Հախումեանց եւ Մկրտիչ Սիթարեանց»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Սկված տենդային աշխատանքները չուտով կը վերջանան եւ մեր քաղաքի բոլոր փողոցները կը լուսաւորվեն էլէքտրական լոյսով։ Փոյթ չէ, թէ որ ատիճանի ժաքրութիւն եւ բարեկարգութիւն է տիրում այն փողոցներում, որտեղ բարձրից պէտք է իր ճառագայթներով լուսաւորէ էլէքտրական լոյսը։ Շատ փողոցներով անձրեւային կամ ձմեռ ժամանակ անկարելի է անցնել եւ մարդ ստիպված պտոյտներ պէտք է գործէ։ Իսկ ինչ անեն այդ փողոցների վրա գտնվող ներքնայարկ չինութիւններում անճարութիւնից ապրող չունեւորները։ Քաղաքի անմաքրութեան կենտրոնը՝ «Թուրքական բազար» կոչված քաղաքամասի մի քանի խորդ ու բորդ փողոցներն են։ Բայց ինչ վնաս. քաղաքի արտաքուստ «չիկերը» ծածկում են այդ բոլորը»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Գիշերով, սեպտեմբերի 7-ին, Ղուբայի բանտում հետեւեալ յանդուգն դէպքն է տեղի ունեցել. բանտային մի խուցում, ուր պատժված են եղել ինն բանտարկեալներ, որոնցից չատերը աքսորի եւ տաժանակիր աշխատանքների տեղից փախած, սղոցում են պատուհանի երկաթները, վայր են իջնում երկրորդ յարկից՝ իրանց վերարկուներից եւ շորերից պարաններ չինելով, երկար բագը, այդտեղից բարձրանում են պատի վրա ու իջնում ցած՝ փողոց։ Բանտարկված աւազակներից՝ զուբայեցի Նէյմաթ Թէիբ օղլի, Զաբար Բուդուղի, որը անցեալ տարի ամառը պառկած ժամանակ էր կալանաւորվել, Խիզիր լէզգին, որ երկրորդ անգամն է փախչում, զարգօվեցի Կուրբան Կուլի Ալի Կուլի օղլին եւ չորս ուրիշները փախչում են. մէկին զինւորները բռնում են՝ սուիններով երկու վէրք հասցնելով. 7 հոգի փախչում են. ինն երորդը մնում է բանտում։ Գաւառապետը գնաց փախչողներին որոնելու համար»։

—

ԲԱՇ-ԱԲԱՐԱՆ գիւղից (Էջմիածնի գաւառ) մեզ գրում են. «Մինչդեռ խեղճ աբարանցին պատրաստվում էր աղատվել մի քանի տարիների կրած նեղութիւնից, յանկարծ վրա հասաւ մի աւելի մեծ դժբաղդութիւն եւ կորան ամենքի յոյսերը։ Սեպտեմբերի 3-ին, գիշերը, սկսվեց սաստիկ անձրեւ տեղալ, որին փոխարինեց ձիւնը սարսափելի ցուրտ եղանակով, այնպէս որ ցուրը սառեց առուներում։ Արադծի ստորոտում գտնված բոլոր հացաբոյսերը ցրտահար եղան եւ մնաց խեղճ ժողովուրդը դարձեալ ձեռքերը ծոցին։ Արդեօք ինչ կը լինի այժմ մեր ժողովրդի դրութիւնը, երբ ամեն ինչ նա ծախել եւ կերել է անբերրիութեան այս մի քանի տարիներում։ Կորուստը շատ մեծ է, վնասված է համարեա ամբողջ Աբարանը»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Դարձեալ անձրեւներն են, որ մեծ վնաս են պատճառում տեղիս գործարաններին եւ թէ առհասարակ առեւտրական շրջաններին։ Օգոստոսի սկզբից, որ սովորաբար գործարանների աշխատելու ամենաաջող եւ լաւ ժամանակն է, անընդհատ տեղացող անձրեւները արգելք են լինում գործարաններին աշխատելու, որովհետեւ գործարաններում պատրաստի ամբարած մնդուկները անձրեւների պատճառով անկարելի է փոխադրել շոգենաւերը, որ տեղ բացվի նորից աշխատանք սկսելու։ Գործերի այդ թուլութիւնն է պատճառը, որ բազմաթիւ մշակներ եւ բանւորներ Բաթումի բազմաթիւ սրճարաններում կամ գինետներում խմված, զանազան «քէֆեր» են սարքում եւ տեղնուտեղը թողնում իրանց դաշը քրտինքի վաստակը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Քննադատելով Գերմանիայի առաջարկը Չինաստանի հետ խաղաղութեան բանակցութիւններ վարելու ծրագրի մասին, «Frankfurter Zeitung» գրում է. «Ո՞վ կարող է Չինաստանում կատարել Գերմանիայի պահանջը եւ յանձնել պետութիւնների ձեռքը մեղաւորներին, քանի որ այդ մեղաւորները նստած են հէնց կառավարութեան մէջ։ Չինացիների սովորութեան համաձայն՝ իշխանութիւն ունեցող անձինք, հետեւաբար այս դէպքում իսկական մեղաւորները, մեծ հաճութեամբ կը պատժէին կամ կը յանձնէին պետութիւններին մի քանի երկրորդական աստիճանաւորների, ցոյց տալով նրանց իբր նախաձեռնողներ տեղի ունեցած անկարգութիւնների։ Բայց պետութիւնները չէին բաւականանայ դրանով, եւ եթէ նրանք ընդունեն գերմանական առաջարկը՝ այն ժամանակ դրա հետեւանքը այն կը լինի, որ դաշնակից զօրքերը հարկադրված կը լինեն արշաւանքներ սկսել՝ բռնելու համար այն անձանց, որոնց վրա կանգ են առել Պեկինի օտարերկրեայ դեսպանները։ Ահա այս բոպէին հանդէս է գալիս կոմս Վալդերզէէ. եւ հազիւ թէ սխալվում են նրանք, որոնք Բիւլօվի առաջարկութեան վրա նայում են որպէս մի նախապատրաստական քայլի վրա, որի նպատակն է ասպարէզ բանալ ընդհանուր հրամանատարի ապագայ գործունէութեան համար»։

Նոյն հարցի մասին, ինչպէս հեռագրում են «Daily Express»-ին Շանղհայից, Սօլիսբիւրի հետեւեալը հաղորդեց Լի-Խունգ-Զանգին. «Անգլիական կառավարութիւնը Կվանգ-Սու կայսրի Պեկին վերադառնալը համարում է էական պայման խաղաղութեան բանակցութիւններ սկսելու համար։ Կայսրի ներկայութիւնն անհրաժեշտ է. հակառակ դէպքում չինական կայսրութեանը սպառնում է անխուսափելի անկում։ Պետութիւնները նոյն պաշտպանութիւնը ցոյց կը տան կայսրին, որպիսին ցոյց են տալիս այժմ Պեկինում իշխան Ցինին։ Դաշնակիցների գլխաւոր ցանկութիւնն է պահպանել Չինաստանի ամբողջութիւնը, բայց ոչ մի բան չէ կարող ստիպել պետութիւններին հրաժարվելու իրանց դիտաւորութիւնից եւ չը պատժելու այն յանցաւորներին, որոնց վրա ընկնում է չինական կառավարութեան անունով կատարված սոսկալի ոճիրների պատասխանատուութիւնը։ Դաշնակիցները հետաքրքիր կը լինեն նրանց ամբողջ Չինաստանում»։

Ֆրանսիական լրագիրներն եւս իրանց կողմից հաւանութիւն են տալիս Գերմանիայի առաջարկութեան։ Պարիզի «Matin» լրագրի կարծիքով, կոմս Բիւլօվի շրջաբերական հեռագիրը կարող է նկատվել իբրեւ լուրջ հիմունք առաջիկայ բանակցութիւնների համար։ Այդ հիմունքը չինական անկարգութիւնների մեղաւորներին պետութիւնների ձեռքը յանձնելն է։ Գերմանական կառավարութեան յայտնած պահանջը ջախջախում է Լի-Խունգ-Զանգի ձգտումները, որ ջանք է գործ դնում երաշխաւորութիւններ ձեռք բերել պետութիւններից խառնակութիւնների գլխաւոր յանցաւորների կեանքի ապահովութեան համար։ Մենք չը գիտենք դեռ եւս,—աւելացնում է լրագիրը,—թէ ինչ ընդունելութիւն կը գտնէ օտարերկրեայ դիւանագէտների կողմից Բիւլօվի յայտագիրը, բայց նա արդէն մատուցել է այն ծառայութիւնը, որ մատնում է մի տեսակ սիստեմ չինական հարցը լուծելու գործում եւ հանում է պետութիւններին այն անգործ դրութիւնից, որից երեւի երկար ժամանակ չը պիտի դուրս գային նրանք։

Մի այլ ֆրանսիական լրագիր—«Journal des Debats»—ամենեւին չէ կասկածում, որ գերմանական յայտագիրը հաւանութիւն կը գտնի բոլոր պետութիւնների կողմից, որ այդ յայտագրի մէջ յայտնված միտքը կատարեալ համակրութեան կարժանանայ ֆրանսիական քաղաքական շրջաններում, առանձնապէս նրա համար, որ Ֆրանսիան արդէն վաղուց յայտնել է նոյն միտքը իր պաշտօնական ներկայացուցիչների միջոցով»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդօնից գրում են «С.-Пет. Вѣд.» լրագրին. «Տասնեւչորսերորդ պարլամէնտը Վիկտորիա թագուհու օրով պաշտօնապէս արդէն արձակված է։ Գլխաւոր ընտրութիւնները կը սկսվեն երկու շաբաթից յետոյ, իսկ նոյեմբերի 1-ին կը կայանայ նոր ընտրված պարլամենտի առաջին նիստը։ Կառավարչական կարգադրութիւնը նոր ընտրութիւնների մասին անակնկալ չէր այն մարդկանց համար, որոնք ուշի ուշով հետեւում են Անգլիայի ներկայ քաղաքական կեանքին։ Զեմբերլէն իր կուսակիցներով այս անգամ եւս յաղթող հանդիսացաւ։ Ուղիղ է, դեռ եւս յոյս կար, թէ վերջին բոպէին, գուցէ, Սօլիսբիւրին կը հրաժարվի հետեւելու Զեմբերլէնի եւ ունիօնիստների խորհուրդին եւ կը յետաձգէ ընտրութիւնները մինչեւ յունվար, բայց այդ յոյսին վիճակված չէր իրականանալ։ Թուլկամ լորդ Սօլիսբիւրին այս անգամ էլ տեղի տուեց աւելի եռանդոտ միստեր Զեմբերլէնի հարկադրական պահանջների առաջ։ Այժմ արձակված պարլամենտի լիազօրութեան ժամանակամիջոցը կը լրանայ միայն երկու տարուց յետոյ։ Ցեսված այն ահագին մեծամասնութեան վրա, որ ներկայ մինիստրութիւնը ունէր համայնքների ժողովում, նա ամենեւին երկիւղ չունէր երբ եւ իցէ պարտութիւն կրելուց։ Եւ նա չէր էլ վախենում. բայց դա, երեւի, բաւական չէր։ Մինիստրութիւնը որոշեց ապահովել իր գոյութիւնը նոր ընտրութեան ընթացքում եւ այս նպատակով օգուտ քաղել այն «փառաւոր» հետեւանքներից, որոնց հասել է կառավարութիւնը հարաւային Աֆրիկայում՝ միացնելով բրիտանական տիրապետութիւններին երկու փոքրիկ հանրապետութիւններ։ Մինիստրութեան նպատակը շատ պարզ է. նա կամենում է շահագործել անգլիական զօրքի «մեծ յաղթութիւնները», եւ յենվելով նրանց վրա, յաղթող հանդիսանալ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ»։

—«Daily Telegraph» հաղորդում է այն յայտարարագրի պատճէնը, որ տրանսվալեան կառավարութիւնը հրատարակել է Կրիւգէրի առաջիկայ ճանապարհորդութեան վերաբերմամբ։ «Որովհետեւ—ասված է նրա մէջ—նախագահի զառամեալ հասակը հնարաւորութիւն չէ տալիս նրան հետեւելու զօրքերին եւ որով հետեւ գործադիր խորհուրդը համոզված է, որ նախագահի մատուցած նախկին ծառայութիւնները դեռ եւս կարող են շահագործվել յօգուտ երկրի եւ ժողովրդի, ուստի նա որոշեց վեցամսեայ արձակուրդ տալ նախագահին Եւրոպա գնալու համար, որպէս զի այնտեղ նպաստել մեր գործին. եւ ես, Շալկ-Բուրգէր, հանձնարարվեցայ օրէնքի, կը բռնեմ նրա տեղը»։ Սառորագրել են փոխ-նախագահ Շալկ-Բուրգէր եւ գլխաւոր քարտուղար Բէյցը։

—Արտասահմանեան լրագիրները հաղորդում են մի նոր տեղեկութիւն աւստրիական կառավարութեան բռնելիք դիրքի մասին այն դէպքում, եթէ նոր բէյլիստաղն եւս, օրստրուկցիայի պատճառով, դատապարտվի անգործութեան։ Կառավարել երկիրը սահմանադրութեան 14-րորդ յօդուածի զօրութեամբ հիմա անյարմար է համարվում նրա համար, որ այդ յօդուածը, ըստ սահմանադրութեան, չէ կարող գործադրվել տնտեսական մի քանի հարցեր, ինչպէս, օրինակ, փոխառութեան հարցը քննադատելու ժամանակ։ Ելքի նոր միջոցը այդ դրութիւնից պէտք է կայանայ, իբր թէ, նրանում, որ պատգամաւորների ժողովի պարտաւորութիւնները կը յանձնվեն կատարելու վերին պալատին։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

15 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա Իրանց Որդոց հետ սեպտեմբերի 14-ին մեկնեցին Սպալայից դէպի Ղրիմի հարաւային ափը։

Թիւրիմացութիւնների առաջն առնելու համար՝ «Ռուսական հեռագրական գործակալութիւնը» անհրաժեշտ է համարում բացատրել, որ Կանտոնից ուղարկված հեռագրի մէջ օտարերկրեայ միսսիաները կողոպտումների եւ աւերումների ենթարկելու մասին, որոնք դեռ եւս շարունակվում են Կվանտունում, խօսքը ոչ այն Կվանտունի մասին է, որ Լեաօդունեան թերակղզու մասն է, այլ Գուակ-Դուն նահանգի մասին, որի գլխաւոր քաղաքը Կանտոնն է։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօէրական զօրքի գլխաւոր ոյժերը, որոնց հետ են եւ Շալկ-Բուրգեր ու գեներալ Վիլիեն, ժողովվելով գնում են դէպի մի կէտ, որ գտնվում է Պիտերբուրգի հարաւակողմում։ Այդ տեղը շատ վատառողջ է եւ շրջապատված է անտառներով, որտեղից բօէրները չեն կարող ելք ունենալ, որովհետեւ երկաթուղին անգլիական զօրքերի ձեռին է։

ՊԱՐԻԶ։ Շանղհայի ֆրանսիական հիւպատոսը հեռագրում է, թէ գեներալ Տունֆուցզեան նշանակված է արեւմտեան եւ հիւսիսային բանակների հրամանատար։

ՇԱՆԳՀԱԻ։ Հրատարակվեց հրաման նոր պալատ չինելու մասին Սինանֆուում։ Լի-Խունգ-Զանգ ուղեւորվեց Տեանձինից դէպի Պեկին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Շէն հաղորդեց այստեղի արտաքին գործերի մինիստրութեան, որ պրինց Տուան նշանակված է կայսրի մեծ քարտուղար։ Հակառակ օտարերկրեայ մամուլի պնդումների՝ թէ Տուանի նշանակումը անմիջական հետեւանք էր Ամերիկայի պատասխանին, որ նա տուեց գերմանական առաջարկին, արտաքին գործերի մինիստրութիւնը ցոյց է տալիս, որ Տուանի նշանակումը հրատարակված էր սեպտեմբերի 1-ին, իսկ տեղի է ունեցել դեռ մի քիչ էլ առաջ, այն ինչ Ամերիկայի պատասխանը հրատարակված է սեպտեմբերի 10-ին եւ այդ տեղեկութիւնը չինական արքունիքին հասել է մի քանի օր յետոյ։

ՎԻԵՆՆԱ։ Հաղորդում են, որ եապօնական կայսրը եկող գարնանը կայցելէ Եւրոպա եւ ամենից առաջ Պետերբուրգ, իսկ Վիէննայում կը լինի մայիսին։ «Polit. Corresp.» լրագիրը հաստատում է, որ եապօնական կառավարութիւնը անպայման ընդունեց Բիւլօվի շրջաբերական յայտագիրը։

ՇԱՆԳՀԱԻ։ Սեպտեմբերի 11-ին «Գերտա» նաւով Վալդերզէէ հասաւ Զիֆու. նրա Տակու գալը սպասվում էր սեպտեմբերի 12-ին։

ՖՐԷՑԲՈՒՐԳ։ Գեներալ Սետոյ 7000 զինւորներից բաղկացած զօրաբաժնով ազատեց Շվեյցերի բերդապահ զօրքը, որը շրջապատված էր բօէրներով։ Ազատելուց առաջ տեղի ունեցաւ պատերազմ։ Բօէրները ծանր կորուստներ կրեցին։ Բօէրների հրամանատարը գերի առնվեց։

ՏԵԱՆՑԶԻՆ։ Զաֆֆի եկաւ այստեղ, պաշտօնապէս այցելեց Լիխունգչանգին եւ խորհրդակցեց նրա հետ համաձայնութեան չանների վերաբերմամբ։ Ուրիշ պետութիւններից մինչեւ այժմ միայն Ռուսաստանը տեղեկութեան առաւ Լիխունգչանգի ներկայութիւնը այստեղ։ Լուրեր են պատում, որ ռուսները Լուտայի մարտկոցները գրաւելուց յետոյ շտապով գնացին երկաթուղու երկարութեամբ դէպի հիւսիս՝ Շանղհայդուանը գրաւելու նպատակով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ. պ. Մ. Մարգարեանց։ Սատանք. կուղարկենք ըստ պատկանելոյն. կը տպենք երբ հնարաւոր կը լինի։

ԿՐԱՍՆԱՎՕԴՍԿ։ Ն. Գ. Վարդանեան։ Սատացել ենք։ Ջուր էք զրմանում։ Կը տպենք երբ հնարաւոր կը լինի։

ՐԻԳԱ։ Ուսանող։ Յայտնեցէք ձեր անունը և ազգանունը։ Ալլապէս չենք կարող տպել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։

Բաղուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ. 1 ր.	զիշ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 53 »	եր. 5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 32 »	եր. 6 » 34 »
Բաթում է հասնում	եր. 9 » 1 »	առ. 7 » 14 »

№ 6 գնացքը։ № 4 գնացքը։

Բաթումից դուրս է գալիս	առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 7 » 15 »	առ. 8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 7 » 45 »	» 10 » 05 »
Բաղու է հասնում	ցեր. 12 » 10 «	» 5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր. 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում	երեկ. 9 » 41 »
Բաթումից դուրս է գալիս	զիշ. 11 » 18 »
Թիֆլիս է հասնում	առաւ. 9 » 30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ. 9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ. 7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր. 12 »	56 «
Կարսից դուրս է գալիս	ցեր. 3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս	երեկ. 8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ. 7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօտասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի և կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօտասեվիչ—5—6 ժ.
Ս. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթս հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ս. Աբովանիսակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թ-ի սեպտեմբերի 18-ին նշանակված է աճուրդ՝ ամբողջովին քարայատակելու Թիֆլիսի ա. քաղաքամասում գտնվող Բօբիյսկայա փողոցը 123,01 սաժէն երկարութեամբ, 1087 ր. 40 կ. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր մի օրերը՝ ժամի 9-ից մինչև 3-ը։ 1—1

Վիէննայում լոյս տեսաւ

„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ“

I մաս

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կորիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.
(Ճանապարհածախքով 1 ր. 75 կ. կամ 4 ֆր.)

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, իսկ արտասահմանից Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/,, Mechitharistengasse 4.

(ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՍԱԿԱՒԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ)
(Հ. չ.) 11—20

ՕՐԻՈՐԴ ԳՕՌԱՆ

Դաշնամուրի, գաղիերէնի, անգլիերէնի եւ հայերէնի

Դասախօսութիւնները շարունակելու է սեպտեմբերի 15-ից։ Դիմել պարոն Եփրեմ Մատուրեանցի խանութը, Դվորցովայա փողոցի վրա։
(Հ. չ.) 3—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառւում են հետեւեալ նոր գրքերը

Բուդուղեան՝ Սիֆիս, Թիֆլ. 1900 թ. 10 կ.
Հիւգօ՝ Արդար Մերունի, Թիֆլ. 1900 թ. 15 կ.
Սեդրակեան Արիստ. եպս.՝ Քահանայական խնդիր, Մօսկ. 1900 թ. 1 ր.

Լոյս տեսաւ

ԿԱՄԻԼԼ ՖԼԱՄՄԱՐԻՕՆԻ

ՈՒՐԱՆԻԱ

աստղագիտական վէպը

Թարգմ. ֆրանս. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ։

Գիրքը տպված է լաւ եւ չքեղ թղթի վրա, 376 երես, միջակ գիրքով եւ արժէ 1 ր. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, Г. Галустянцу, Лорис-Меликовская, № 11. 4—10

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

վերադառնալով արտասահմանից, վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը, առաւօտեան 9—11 ժամը, երեկոյեան 5—7-ը։ Սերգիեվսկայա փողոց, № 12, տ. Ծովիանովի։
1—5

Քաղաքային պրոֆէսիոնալ արհեստանոցի ուսուցչուհին բաց է անում

Կար ու ձեւի

երեկոյեան դասընթացքներ, ամենաչափաւոր գներով։ Ժամը 4—6։

Մեծեվայա փող (Լաբօրատօրնայա), տուն Տ. Դաշկեվիչի, № 72, բնակարան Եվանգելօվների։ Նոյն տեղում պարապում են երեխաների հետ կրկնողութեամբ։ (չ. ե. հ.) 1—3

ԷՋՄԻԱԾՆԵՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ծխականները հրաւիրվում են երկրորդ անգամ ժողովի եկեղեցու վերանորոգութեան հարցի եւ գլխաւորապէս եկեղեցական գումարից այդ նորոգութեան համար ծախսեր անելու մասին խորհրդակցելու համար։ Ժողովը թւով երկրորդը լինելով՝ անկախ ներկայ գտնվողների թիւից՝ կը կայացնէ վճիռ։ Ժողովը տեղի կունենայ կիրառի, սեպտեմբերի 17-ին, առաւօտեան 10 ժամին։

Երէցփոխ՝ Գրիգոր Նաշխունեանց
1—1

Սայլապան Շահնազարեանց, որ հաղիւ հազ կարողանում էր մի կերպ ապրեցնել իր բազմանդամ ընտանիքը (վեց փոքրիկներ) վերջին ժամանակ սալը չուռ գալով՝ տակն է ընկել եւ կոտրել ոտը։ Մնացել է թէ ինքը, թէ կինը հիւանդ՝ անկողիններում եւ փոքրիկները ամենաթչուառ, անօգնական գրութեան մէջ։ Լալագին խնդրում է բարեխիղճ մարդկանցից թէ նիւթական եւ թէ բժշկական օգնութիւն։

Հասցէն։ Харпухск. ул., д. Гулазова, № 306.
2—5

Բ Ժ Ի Շ Կ Գ. Մ Ա Հ Ր Ա Բ Ե Ա Ն

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4.
[Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ].
10—25

Մի ուսուցիչ, որ աւարտել է բէյաթի դասարանից եւ մասնագիտորէն ուսումնասիրել է գերմաներէն, ֆրանսերէն եւ լատիներէն լեզուները, կամենում է պատրաստել կամ կրկնողութեամբ պարապել բոլոր միջնակարգ դպրոցների աշակերտների հետ։ Հարկաւոր դէպքում կարող է տալ եւ երաշխաւորութիւն։

Հասցէ—Елисаветинская, 71. правый подъѣздъ.
2—2

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ. 5—7 ժ.։ Երեւանեան հրապարակ. տ. Խարազեանի. Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ Эриванская площадь, домъ Харазова. (Ե. հ. չ. 10—25

Լոյս տեսաւ Մոսկվայում

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

◆ՀԻՆ ՅԱՒ◆

(Հրապարակախօսական խոհեր)
ԳԻՆԸ 30 Կ.

Վաճառվում է Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում, «Մշակի» խմբագրատանը եւ Հրատարակչական ընկերութեան գրասենեակում, Գ. Գալստեանի մօտ։ (Ե. չ.) 4—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Տեղափոխվեց նոր բնակարան—Նիկոլաեվսկայա փողոց № 46։ (Николаевская ул. № 46)։ (Հ. ուր. չ.) 4—5

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ դասընթացքի XI շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ.) Առևտրական թուաբանութիւն։
Գ.) Առևտրական նամակագրութիւն։
Դ.) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1900 թ-ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ (Ե. հ. չ) 23—30

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) ՄԻՆԳՐԵԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԻԼԹ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առևտրական գործակալութիւն (Ե. հ. չ.) 13—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆԻՆՆԵՐՈՒԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու տեսի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հաստատի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 23—25

М. 109486

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ուսանողներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. չ.) 21—25

Дозволено цензурою, Тифлисъ. 15 Сентября 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.